Պարոն/Տիկին Կ. Սարգսյան ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն
և Ա. Հակոբյան

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Մ. Մեսրոպյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Մ. Մեսրոպյան

«09» 04 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Հանձնաժողովի աշխատակցի անունը, ազգանունը՝**
   - Կամո Սարգսյան,
   - Արա Նռանյան:

2.Զբաղեցրած պաշտոնը - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող

- հանձնաժողովի անդամ,
- հանձնաժողովի անդամ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Յուրմալա, Լատվիա, 2025 թվականի ապրիլի 2-3-ը:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Ջրի կարգավորողների եվրոպական ասոցիացիա (WAREG):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցություն WAREG-ի 34-րդ ընդհանուր ժողովին:

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ WAREG-ի 34-րդ ընդհանուր ժողովին մասնակցում էին WAREG-ի անդամ գրեթե երկու տասնյակ երկրների ներկայացուցիչներ, որոնք մշտապես ակտիվորեն մասնակցում են WAREG-ի շրջանակում իրականացվող աշխատանքներին:

Ընդհանուր ժողովը ղեկավարբում էր նախագահ Վերա Էիրոյի (ERSAR) կողմից: Այն հավաքել էր եվրոպական կարգավորողներին կարգավորման ստանդարտների բարելավման և համագործակցության ընդհանուր հանձնառությունն ամրապնդելու համար: Ժողովի ընթացքում հաստատվեց WAREG-ի 2025-2026թթ. աշխատանքային ծրագիրը, ներկայացվեց քարտուղարության հաշվետվությունը, բյուջեին առնչվող հիմնական խնդիրները:

Լատվիայի ներկայացուցիչը ներկայացրեց իրենց հանձնաժողովի գործունեությունը, ջրային ոլորտին առնչվող հիմնական հարցերը:

Բուլղարիայի և Հունգարիայի ներկայացուցիչները ներկայացրին WAREG-ի կողմից առաջիկայում իրականացվելիք հետազոտությունների թեմաները, և որոշվեց այդ աշխատանքներին մասնակցության ձևաչափը:

WAREG-ի անդամ երկրների ներկայացուցիչները հանդես եկան կարճ ելույթներով՝ ներկայացնելով իրենց երկրներում առկա ջրային ոլորտի հիմնական խնդիրները:

Միջոցառումը նշանավորվեց նաև WAREG-ի թեմատիկ աշխատանքային խմբերի մեկնարկով, որոնք ուղղակիորեն հանձն են առել առաջ մղել 2025-2026 թվականների աշխատանքային ծրագիրը: Աշխատանքային խմբերի նպատակն է տեխնիկական համագործակցության միջոցով ռազմավարական առաջնահերթությունները վերածել գործող արդյունքների:

Որոշվեց հաջորդ Ընդհանուր ժողովն անցկացնել սույն թվականի հունիսի 18-20-ը Աթենքում, Հունաստան, իսկ 2026 թվականի ապրիլի կեսերին՝ Երևանում, Հայաստան: Ընդհանուր ժողովը Հայաստանում անցկացնելու առաջարկը միաձայն ընդունվեց անդամ երկրների ներկայացուցիչների կողմից:

7.Հանդիպումները, ելույթները՝ Ժողովի ընթացքում հանձնաժողովի ներկայացուցիչները հանդիպել են WAREG-ի անդամ երկրների մի շարք ներկայացուցիչների հետ, հանդես են եկել կարճ ելույթով՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունում առկա ջրային ոլորտի հիմնական խնդիրները:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները՝ Հանդիպման ընթացքում որոշում կայացվեց

հաջորդ՝ 35-րդ Ընդհանուր ժողովն անցկացնել սույն թվականի հունիս 18-20-ը Աթենքում, Հունաստան, իսկ 2026 թվականի ապրիլի կեսերին՝ Երևանում, Հայաստան:

Գործուղվող ---------- 09.04.25 **Կ. Սարգսյան**

(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 09.04.25 **Ա. Նռանյան**

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով__

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 121-Հ, 11.03.2025թ.**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Կամո Սարգսյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Արա Նռանյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ք.Յուրմալա /Լատվիա/**

5. Գործուղման ժամկետները **01.04.2025-04.04.2025 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Կամո Սարգսյան	Արա Նռանյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)	11,235	11,235	22.470
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	224,698	224,698	449.396
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	103	103	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	44,151	44,151	
	Օրերի քանակը	3	3	
	Ընդամենը (դրամ)	132,453	132,453	264.906
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով եվրո)	81	81	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	34,754	34,754	
	Օրերի քանակը	4	4	
	Ընդամենը (դրամ)	139,015	139,015	278.030
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար		8,200	8.200
	Այլ ծախսեր (*նկարագրել*)			-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		507,401	515,601	1,023.002

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 08.04.2025թ.